Հավելված 1
Վահագնի համայնքի ավագանու
2021 թ-ի փետրվարի 23-ի թիվ 4-Ն որոշման

Վահագնի համայնքի 2020թ. Տարեկան հաշվետվություն

Վահագնի համայնքի 2020թ. Բյուջեն կատարվել է.

ա) եկամուտների գծով ՝ 80.1 %- ով 35098.9 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 28110.3 հազար դրամ:

- Բյուջի սեփական եկամուտների գծով կատարվել է 79.44 %- ով 5746.1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4564.9 հազար դրամ:

- Պաշտոնական դրամաշնորհների գծով (Համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիա և այլ դոտացիա) նախատեսված 27306.6 հազար դրամի դիմաց կազմել են 27306.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 %:

- Վարչական բյուջեի Տարեսկզբի մնացորդը կազմել է 4892.9 հազա դրամ:

- Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը ՝ 4892.9 հազար դրամ, ամբողջությամբ ուղղվել են 2020թ.-ի ֆոնդային բյուջեի ծախսերի իրականացման համար:

Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները նախատեսված 2335.3 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1580.9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 67.7 %:

Գույքահարկ

Գույքահարկի գծով եկամուտները նախատեսված 3244.2 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2879.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 88.8 %:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերը նախատեսված 148.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել են 103.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 69.6 %:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճար

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարը նախատեսված 120.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 38.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 32.3 %:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտ է հանդիսացել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 4892.9 հազ.դրամ:

Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտը կազմել է 10403.8 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը նախատեսված 29172.7 հազար դրամի դիմաց կատարվել է 24009.2 հազար դրամ, կամ 82.3 %-ով:

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	20795.8 հազ. դրամ
- Փողոցների լուսավորում	950.0 հազ.դրամ
- Սոցիալական աջակցություն	525.0 հազ.դրամ
- Միջնակարգ ընդհանուր կրթություն	124.0 հազ.դրամ
- Տնտեսական հարաբերություններ	538.5 հազ.դրամ
- Կեղտաջրերի հեռացում	499.9 հազ.դրամ
- Մշակույթային միջոցառումներ	626.0 հազ.դրամ

Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջի ծախսերը նախատեսված 10403.8 հազար դրամի դիմաց կատարվել է 7574.0 հազար դրամ կամ 72.8 %

- Ճանապարհաշինություն	980.0 հազ.դրամ
- Հուշարձանի լուսավորություն	964,0 հազ.դրամ
- Ապարատ	520.0 հազ.դրամ
- Գյուղտեխնիկա	5110.0 հազ. դրամ

Բյուջեի կատարման արդյունքում ծախսերի գծով պարտքեր չեն գոյացել:

Վահագնի համայնքի ղեկավար՝ Ս. Կոստանդյան

Հավելված 2
Վահագնի համայնքի ավագանու
2021 թ-ի փետրվարի 23-ի թիվ 4-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վահագնի համայնքի 2019-2023թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրում ընդգրկված թվով 5 առաջնահերթ խնդիրներից (ծրագրերից) 2020թ-ին իրականացվել է հետևյալը.

1. Սուբվենցիոն ծրագրի միջոցով ձեռք է բերվել գյուղտեխնիկա:
2. Իրականացվել է փողոցների բարելավման և լուսավորման աշխատանքներ:
3. Իրականացվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի և կից թանգարանի տարածքի բարեկարգում՝ լուսավորության և խաղահրապարակի կառուցում:

2021 թվականին նախատեսված է իրականացնել, ներհամայնքային ճանապարհների հիմնական վերանորոգում, գյուղտեխնիկայի ձեռքբերում:

Վահագնի համայնքի ղեկավար՝ **Ս. Կոստանդյան**